ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՈՎ

ՀԱՅԵՐԻ ՄԻ ԽՄԲԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 20 հունիսի (ՏԱՍՍ).— Թերթերի հաղորդագրությամբ երեկ Կոնստանցայից «Պոբեդա» ջերմանավով Սովետական Հայաստան մեկնեց ռումինահայերի երկրորդ մեծ խումբը։ Ջերմանավը մեկնելուց առաջ նավահանգստում տեղի ունեցավ մեկնող հայերի և Կոնստանցայի բնակչության բազմահազար միտինգ։

Ճառերով հանդես եկան «Հայաստանի Ճակատ» դեմոկրատական հայկական կազմակերպության նախագահ Դանիելյանը, Կոնստանցա քաղաքի քաղաքագլուխ Դումիտրու Բերսանեսկուն, Ռումինիայում հայկական թեմի ղեկավար Վազգեն վարդապետը։

Սովետական դեսպանության անունից մեկնողներին, նրանց սովետական քաղաքացիություն ստանալու առթիվ, շնորհավորեց Ռումինիայում Սովետական Միության գլխավոր հյուպատոս Էլչիբեկովը։ Միտինգում ընթերցվեց մեկնող հայերի դիմումը ռումինական ժողովրդին։ Այդ դիմումի մեջ ի միջի այլոց ասված է. «Մենք թուրքական գազանային ջարդերից հետո կենդանի մնացած և մեր թանկագին հայրենիքը վերադարձող հայերս երբեք չենք մոռանա եղբայրական այն ըմբռնումը, որ մեր նկատմամբ ցուցաբերեց ռումինական ժողովուրդը»։

Միտինգում ներկա եղողների բուռն օվացիայի ներքո ի պատիվ Գեներալիսսիմուս ընկեր Ստալինի և սովետական ժողովրդի հռչակված կեցցեի հնչյունների տակ «Պոբեդա» ջերմանավը Կոնստանցայից հեռացավ, ուղղություն վերցնելով դեպի Բաթումի։

Սովետական Հայաստան մեկնած հայերի երկրորդ խումբը բաղկացած է 1022 մարդուց։

ՀԱՅԵՐԻ ՆՈՐ ԽՄԲԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

ԲԱԹՈՒՄԻ, 24 հունիսի (ՀՀԳ-ի հատ. թղթ.).— Հունիսի 23-ին «Պոբեդա» ջերմանավով Ռումինիայից Բաթումի ժամանեց Սովետական Հայաստան վերադարձող հայերի այս տարվա առաջին խումբը։ Ընդամենը ժամանել է 1022 մարդ։ Հիմնականում դրանք բանվորներ են՝ կոշկակարներ, տեքստիլագործներ, էլեկտրիկներ և ուրիշներ։ Զգալի խումբ են կազմում ուսուցիչները, բժիշկները, դեղագործները։ Ժամանածները իրենց հետ բերում են Հայաստանի Պետական թանգարանին նվիրելու համար նկարների, արվեստի գործերի և հազվագյուտ գրքերի կոլեկցիա։